

«ԱՌԱՎՈՏ» ՕՐԱԹԵՐԹԻ 13.12.2007Թ.  
«ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՈՒՆԵՑՎԱԾԶԸ  
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՑԻՆ»  
ՀՈԴՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի ընթերցող, հողվածի հեղինակը, վերլուծելով Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիների՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացրած գույքի ու եկամուտների հայտարարագրերը, եզրակացրել է, որ հայտարարագրերը պետք է ներառեն տվյալներ 2007թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար, և համոզված արձանագրել, թե 9 առաջադրվածներից միայն մեկն է «պահպանել սահմանված ժամկետը»:

Իր գույքն ու եկամուտները գոնե մեկ անգամ հայտարարագրած ցանկացած քաղաքացի կհավաստի, որ հայտարարագիրը լրացնելիս դրա մեջ ներառում են տվյալներ մինչև հայտարարագիր լրացնելն ունեցած գույքի և եկամուտների մասին և որ հնարավոր չէ հայտարարագրում ներառել տվյալներ եկող ժամանակահատվածի վերաբերյալ:

Անաչառ լրագրողը կբավարարվեր Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիների գույքի ու եկամուտների վերաբերյալ հանրությանը տեղեկություն տրամադրելով, իսկ հարցերի դեպքում կարող էր պարզաբանում ստանալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից և չէր փորձի կամայական պարզաբանման կամ մեկնաբանման ենթարկել ՀՀ օրենսդրության որոշ դրույթներ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն «1.Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

2. Եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները:»:

Եթե լրագրողը ծանոթ լիներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նշված հոդվածի, ՀՀ ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի և հարցի հետ կապված ՀՀ կառավարության համապատասխան որոշումների ու ՀՀ

կենտրոնական ընտրական հանձնաժողովի 03.08.2005թ. N 36-Ն որոշման պահանջներին և չնույնացներ «ընտրություններ» և «քվեարկության օր» հասկացությունները, կհանգեր այլ եզրակացության:

Փաստորեն թեկնածու առաջադրվող քաղաքացիները, եթե հայտարարատու են, ընտրական հանձնաժողով ներկայացնելու համար հայտարարագրում են ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն ներկայացրած վերջին հայտարարագրում ներառված իրենց գույքն ու եկամուտները: Իմաստը՝ հայտարարագիրն ընտրական հանձնաժողով ներկայացնելով՝ թեկնածու առաջադրված քաղաքացին հրապարակում է հայտարարագրում ներառված նաև այն տեղեկությունները, որոնք «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով հրապարակման ենթակա չեն:

Բոլոր դեպքերում, 2007 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 6-ը հայտարարագիր լրացնելիս հնարավոր չէ դրա մեջ ներառել տվյալներ մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

Վերը շարադրվածի հաշվառմամբ պարզ է դառնում, որ Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիներից «միայն մեկը՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն է, որ» չի պահպանել սահմանված կարգը և ոչ ճիշտ ժամանակահատվածի համար հայտարարագրել իր գույքն ու եկամուտները: